ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
հասարակություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz

ՀՀ պատական
կառավարման
ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 7.

Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում ավագանու լիազորությունների շրջանակը

Երևան, 2026

Ուսումնական մոդուլը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ ԳՄՀԸ/GIZ համագործակցության շրջանակում **«Ավագանու անդամների վերապատրաստման կարիքների գնահատում և կարողությունների զարգացում»** ծրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 7

ՄԱՍ 1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ) 9

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ) 23

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 31

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 33

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 34

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոդուլի նպատակը	Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում
Մոդուլի խնդիրները	Տեսական և գործնական ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքներով համայնքի ավագանուն քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում վերապահված լիազորությունների վերաբերյալ, բարձրացնել համայնքի կառավարման ոլորտում ավագանու անդամի իրավունքների և պարտականությունների իմացության մակարդակը, աջակցել այդ բնագավառներում համայնքային խնդիրների լուծմանը ավագանու անդամի ակտիվ ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը:
Մոդուլի տևողությունը	1-4 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ունկնդիրը պետք է առնվազն ընդհանրական գիտելիքներ ունենա քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառների և այդ բնագավառներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր հիմնական տարրերի վերաբերյալ:
Ուսումնասիրվող թեմաները	**Թեմա 1.** Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառներում օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները **Թեմա 2.** Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները
Մոդուլի գնահատման կարգը և միջոցները	Գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Թեստային առաջադրանքը կազմված է մոդուլի թեմաներին անդրադարձող **10** հարցից: Թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի համար սահմանված է միավոր՝ ելնելով դժվարության մակարդակից և թեմային համապատասխանությունից: Թեստային առաջադրանքը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ճիշտ պատասխանները կազմում են առաջադրանքի բոլոր հարցերի առնվազն 70%-ը:
Վերապատրաստման դասընթացից ակնկալվող արդյունքները *(գիտելիքներ,*	

հմտություններ, կարողություններ) Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո ունկնդիրը պետք է՝	
Արդյունք 1.	*կարողանա ակտիվ մասնակցություն ունենալ ավագանու իրավասության գործունեությանը, կազմել և ավագանու, մշտական հանձնաժողովների ու խմբակցությունների նիստերի քննարկմանը ներկայացնել քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառների վերաբերյալ օրակարգային հարցեր, որոշումների նախագծեր, հանդես գալ ելույթներով և զեկույցներով*
Արդյունք 2.	*կարողանա ներկայացնել համայնքի ավագանուն՝ «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքներով վերապահված հիմնական լիազորությունները*
Արդյունք 3.	*կարողանա նշել կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների առանձնահատկությունները*
Արդյունք 4.	*իմանա և կարողանա բնութագրել ավագանու դերը և լիազորությունների շրջանակը համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառում*
Արդյունք 5.	*կարողանա սահմանել քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառների հիմնական հասկացությունները*
Մոդուլի ուսուցման մեթոդաբանությունը	*Մոդուլի ուսուցման ընթացքում, ի լրումն ներկայացված տեսական նյութի մատուցման, անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ ուսուցման առնվազն հետևյալ եղանակները.* • *աշխատանք խմբերով* • *անհատական առաջադրանքների կատարում* • *ինքնակրթություն՝ լրացուցիչ նյութերի ընթերցում և դիտում*
Մոդուլի ուսուցման համար անհրաժեշտ ռեսուրսները	• *մոդուլին և թեմայի առանձնահատկություններին տիրապետող փորձագետ* • *ուսումնական տարածք՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՀՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

Կենսագործունեության միջավայրը կամ կենսամիջավայրը	բնական և արհեստական օբյեկտների, երևույթների և դրանց փոխկապակցվածությունն ապահովող գործոնների համադրությամբ ձևավորվող տարածական միջավայրն է, որը ներազդում է մարդու կյանքի որակի, հոգեբանական ու ֆիզիկական զգացողության վրա
Համայնքի գլխավոր հատակագիծը	համայնքի տարածական զարգացման հիմնադրույթներն ամրագրող ռազմավարական բնույթի փաստաթուղթ է, որը հիմնական (բազային) գոտիավորմամբ սահմանում է համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը, դրանց օգտագործման ռեժիմներն ու պարտադիր պահանջները, ինչպես նաև տարածքների կառուցապատման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը՝ քաղաքաշինական նպատակներով հողօգտագործումը կանոնակարգելու և արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով
Քաղաքաշինական կանոնադրությունը	կառավարության սահմանած դեպքերում և կարգով ավագանու կողմից ընդունված փաստաթուղթ է, որը, ելնելով տեղական առանձնահատկություններից, չհակասելով օրենսդրությանը, համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման պահանջներին, ուղղված է տվյալ համայնքում քաղաքաշինական միջավայրի գեղագիտական հատկանիշների պահպանությանն ու կատարելագործմանը՝ ճարտարապետական և լանդշաֆտային ձևավորման, ինչպես նաև սարքավորումների և այլ տարրերի տեղադրման կամ ձևափոխման, հարդարման նյութերի, երանգավորման և արտաքին լուսավորության պայմաններ ու չափորոշիչներ սահմանելու միջոցով

Քաղաքաշինական փաստաթղթերը	քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր
Աղբահանություն	գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում և տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման նպատակով
Սանիտարական մաքրում	համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, զբոսայգիների, պուրակների, հրապարակների, խաղահրապարակների, բակերի, մայթերի, վերգետնյա և ստորգետնյա անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի, շատրվանների, ճամփեզրերի, կողնակների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների և աղբամանների հարթակների սպասարկումը
Աղբավայր	բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան հատուկ ինժեներական կառույցների համակարգ՝ նախատեսված աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման և չեզոքացման համար

ՄԱՍ 1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ)

Թեմա 1. Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառներում օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները

Անհրաժեշտ է վերհիշել, որ ...

Համայնքի պարտադիր խնդիրներից են՝

- համայնքում բնակարանային շինարարության խթանումը.
- համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

NN	ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.	Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:
2.	Որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
3.	Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները և նախագծման առաջադրանքը) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:
4.	Համայնքի ավագանին, հաստատելով գլխավոր հատակագիծը, իրավունք է ստանում «Քաղաքաշինության մասին» օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով նախատեսված ծավալով ու փուլերով:

5.	Համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի ավագանու հաստատած ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան
6.	Որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ մշակված գոտիավորման նախագիծը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ավագանին: Եթե այն պարունակում է հաստատված գլխավոր հատակագծով սահմանված պահանջների փոփոխություն, ապա համայնքի ավագանու կողմից գոտիավորման նախագիծը հաստատվում է գլխավոր հատակագծի՝ «Քաղաքաշինության մասին» օրենքին համապատասխան կատարված փոփոխությունները հաստատվելուց հետո:
7.	Գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագիծը մշակվում են համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով:
8.	Համայնքի ղեկավարը կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի՝ սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:
9.	Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը և դրանց առաջադրանքները մշակվում են օրենքի պահանջների ապահովմամբ և հաստատվում Հայաստանի Հանրապետության մարզպետի և միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների կողմից:
10.	Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ՝ 1. համայնքների ավագանիները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի հետ. 2. Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետը՝ համաձայնեցնելով միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների հետ.

	3. կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի և միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների հետ:
11.	Մինչև համայնքների գլխավոր հատակագծերի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝ Կառավարության սահմանած կարգով հատուկ այդ նպատակով ստեղծված ժամանակավոր միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:
12.	Այն շենքերում և շինություններում, որտեղ իրականացվում են և (կամ) մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններայդ շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանում է համայնքի ավագանին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

NN	ԱՎԱԳԱՆԻՆ՝
1.	Սահմանում է աղբի կուտակման համար նախատեսված աղբամանի տարողության ձևն ու չափը:
2.	Հաստատում է աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրին, ինչպես նաև ամենամյա աշխատանքների պլաններին կից հավելվածով:
3.	Կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար:
4.	Սահմանում է համայնքի բյուջեի միջոցների հաշվին՝ համապատասխան տեխնիկայի ու սարքավորումների հագեցվածությամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը անմիջականորեն համայնքային հիմնարկների կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորի կողմից: «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կարող են ֆինանսավորվել և (կամ) իրականացվել ՊՄԳ պայմանագրով սահմանված կարգով:

5.	Հաստատում է խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և փոխադրման դրույքաչափերիը:
6.	Սահմանում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի, համայնքի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման պահանջները՝ աղբի հավաքման և փոխադրման թույլտվության հիման վրա:
7.	Հաստատում է աղբի հավաքման և փոխադրման պայմանները և կարգը:
8.	Սահմանում է աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունների համար վճարների դրույքաչափերը, որոնք, սակայն, չեն կարող գերազանցել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20 տոկոսը:
9.	Հաստատում է աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները:
10.	Սահմանում է համայնքային աղբավայրերում աղբի տեղադրման համար վճարը:
11.	Հաստատում է համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման:
12.	Սահմանում է աղբահանության վճարի համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար՝ օրենքով սահմանած կարգով՝ 14-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի սահմաններում:
13.	Սահմանում է աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը:
14.	Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է՝ աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին) վերապահելու կարգը:
15.	Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:
16.	Համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի կողմից

	կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքը կամ համայնքներին կամ դրանց վարչական տարածքում կամ տարածքի մի մասում աղբահանության և (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար

վճարողների պահանջով կարող է տրամադրել

վարձակալության հիմունքներով:

****

Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով:

****

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

****

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

****

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

****

Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կամ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար թույլտվություններ ունեցող անձինք համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են զրկվել աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունից օրենքով նախատեսված՝ աղբի հավաքմանը կամ փոխադրմանը ներկայացվող պահանջները մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ խախտելու դեպքում:

Թեմա 2. Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները

Գյուղատնտեսությունը՝

տնտեսության այն բնագավառն է, որ ընդգրկում է հողագործությունը, անասնապահությունն ու անտառային տնտեսությունը:

Շրջակա միջավայրը՝

բնական և արհեստական այն տարրերի ու պայմանների ամբողջությունն է (օդ, ջուր, հող, կենդանի օրգանիզմներ, մարդածին կառույցներ), որոնք շրջապատում են մարդուն ու կենդանի օրգանիզմներին, ուղղակի ազդում նրանց կենսագործունեության վրա և գտնվում են մշտական փոխազդեցության մեջ:

Այն ներառում է ինչպես բնական, այնպես էլ սոցիալ-տնտեսական գործոններ:

Անհրաժեշտ է վերհիշել, որ ...

Համայնքի պարտադիր խնդիրներից են՝

- **համայնքի գույքի կառավարումը.**
- **համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.**
- **համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը, ներառյալ՝ համայնքում էկոլոգիական կրթության և դաստիարակության խթանումը:**

Վերոնշյալ պարտադիր խնդիրների լուծման նպատակով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի ղեկավարի համար սահմանվել են ոլորտային լիազորություններ

- **գյուղատնտեսության,**
- **անասնաբուժության,**
- **բուսասանիտարիայի,**
- **շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում:**

Հարկավոր է հիշել, որ ...

Համայնքի ավագանին՝

⇒ հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները:

⇒ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն **օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին** (ներառյալ՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրով նախատեսված դեպքերում, բացառությամբ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի), որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: **Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում** համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:

⇒ հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի ՀՀՌԾ-ի բաղկացուցիչ մասը:

⇒ հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

⇒ համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:

⇒ սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

լիազորությունների կատարումը հիմքեր են ստեղծում համայնքի ղեկավարի համար՝

գյուղատնտեսության բնագավառում՝

- կատարելու համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.
- իրականացնելու գյուղատնտեսական զարգացման ծրագրեր.
- ապահովելու անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը՝ համայնքն սպասարկող անասնաբույժի միջոցով.
- խթանելու գյուղատնտեսության զարգացմանը.
- կազմակերպելու համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:

շրջակա միջավայրի պահպանության բնագավառում՝

- կազմակերպելու համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման բնագավառներում անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) աջակցում են համայնքի տարածքում Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարմանը.

բ) ապահովում են համայնքի բնակչության մասնակցությունը Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին հասարակական քննարկումներին.

գ) իրականացնում են «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով, այլ

օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենք

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳ) գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն են՝

1) համայնքին առնչվող հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի ավագանու կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրումը.

2) լիազորության սահմաններում օրենքով սահմանված կարգով հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ ծանուցման, հանրային լսումների կազմակերպման և շահագրգիռ հանրության մասնակցության պայմանների և պահանջների ապահովումը համայնքի ղեկավարի կողմից.

3) համայնքի ղեկավարի կամ ավագանու կամ ավագանու անդամների կողմից հանրային լսումների ժամանակ նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիքի տրամադրումը.

4) նախաձեռնողի գրավոր դիմումի հիման վրա տարածքին առնչվող գործող հիմնադրույթային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

5) ՇՄԱԳ գործընթացներում նախաձեռնողին համապատասխան խորհրդատվության, ինչպես նաև ազդեցության գնահատումն իրականացնելու համար իր տնօրինության տակ գտնվող անհրաժեշտ այլ տեղեկատվության տրամադրումը:

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը պատվիրակված լիազորությունների ձևով իրականացնում են
տեղական ինքնակառավարման մարմինները:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառում ՏԻՄ-երի իրավասություններն են՝

ա) մասնակցությունը համայնքի վարչական սահմաններում գտնվող միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներին վերաբերող պետական ծրագրերի ու կառավարման պլանների մշակմանը և իրենց իրավասության սահմաններում դրանց իրականացումը.

բ) աջակցությունը համայնքի վարչական սահմաններում գտնվող միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմի ապահովմանը.

գ) համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման վերաբերյալ լիազորված պետական մարմնին առաջարկությունների ներկայացումը.

դ) համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը.

ե) համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, օգտագործման, մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների կազմակերպումը, կառավարման պլանների մշակումը.

զ) համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ լիազորված պետական մարմնին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

է) աջակցությունը բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացմանը, ինչպես նաև գիտական ու կրթադաստիարակչական ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

ը) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունը

օրենքով սահմանված պահպանության ռեժիմներին համապատասխան, իրականացնում են՝

տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներում՝

<u>տեղական ինքնակառավարման մարմինները:</u>

Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն ապահովող էկոպարեկային ծառայության կամ տեղական ինքնակառավարման մարմինների և հողերի այլ սեփականատերերի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Գյուղատնտեսական նշանակության հողերը տրամադրվում են քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով՝

1) **գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, գիտահետազոտական և ուսումնական,**
2) **խոտհնձի և անասունների արածեցման,**
3) **գյուղատնտեսական արտադրական շենքերի, շինությունների կառուցման,**
4) **բացառիկ դեպքերում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի, շինությունների կառուցման ու սպասարկման և օրենսդրությամբ չարգելված այլ գործողությունների իրականացման նպատակներով:**

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալությունը՝ հողամասերի, դրանց վրա ամրակայված գույքի հետ միասին կամ առանց դրա որոշակի ժամկետով, վարձավճարի դիմաց հանձնելն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց գյուղատնտեսական գործունեության համար:

****

Վարձակալությամբ տրամադրված հողամասի արդյունավետ օգտագործման և պայմանագրի պայմանների պահպանման դեպքերում վարձակալն ունի պայմանագիրը նոր ժամկետով երկարաձգելու նախապատվության իրավունք:

****

Վարձակալը պետք է կատարի պայմանագրի պահանջները, իսկ վարձատուն պարտավոր է հատուցել դրա հետ կապված ծախսերը և բաց թողնված օգուտը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

****

Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության, իրավունք չունի՝

1) **հողամասը տրամադրել ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով.**
2) **հողամասը լիովին կամ մասնակիորեն տրամադրել գյուղատնտեսական**

արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձին՝ համատեղ օգտագործման նպատակով.

3) փոխել հողամասի նպատակային նշանակությունը, հողատեսքը.
4) հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքը գրավադրել.
5) կատարել բարելավումներ:

****

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության համար վարձավճարի նվազագույն չափը սահմանվում է տվյալ հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս:

Վարձավճարը գանձվում է պայմանագրով սահմանված կարգով:

****

Պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:

Կարևոր է իմանալ, որ ...

❖ **ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ սահմանվել են՝**

⇒ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը.

⇒ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության, կառուցապատման իրավունքի տրամադրման, անհատույց օգտագործման և վարձակալության պայմանագրերի օրինակելի ձևերը:

❖ **ՀՀ կառավարության2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին » N 1477-Ն որոշմամբ**

սահմանվել են, որ՝

⇒ պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքվում են պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով.

⇒ արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար.

խաոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները հաստատում է կառավարությունը:

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում)***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Համայնքի գլխավոր հատակագիծը	կառավարության սահմանած դեպքերում և կարգով ավագանու կողմից ընդունված փաստաթուղթ է, որը, ելնելով տեղական առանձնահատկություններից, չհակասելով օրենսդրությանը, համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման պահանջներին, ուղղված է տվյալ համայնքում քաղաքաշինական միջավայրի գեղագիտական հատկանիշների պահպանությանն ու կատարելագործմանը՝ ճարտարապետական և լանդշաֆտային ձևավորման, ինչպես նաև սարքավորումների և այլ տարրերի տեղադրման կամ ձևափոխման, հարդարման նյութերի, երանգավորման և արտաքին լուսավորության պայմաններ ու չափորոշիչներ սահմանելու միջոցով
Կենսագործունեության միջավայրը կամ կենսամիջավայրը	բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան հատուկ ինժեներական կառույցների համակարգ՝ նախատեսված աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման և չեզոքացման համար
Քաղաքաշինական կանոնադրությունը	համայնքի տարածական զարգացման հիմնադրույթներն ամրագրող ռազմավարական բնույթի փաստաթուղթ է, որը հիմնական (բազային) գոտիավորմամբ սահմանում է համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը, դրանց օգտագործման ռեժիմներն ու պարտադիր պահանջները, ինչպես նաև տարածքների կառուցապատման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը՝ քաղաքաշինական նպատակներով հողօգտագործումը կանոնակարգելու և արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով

Քաղաքաշինական փաստաթղթերը	համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, զբոսայգիների, պուրակների, հրապարակների, խաղահրապարակների, բակերի, մայթերի, վերգետնյա և ստորգետնյա անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի, շատրվանների, ճամփեզրերի, կողնակների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների և աղբամանների հարթակների սպասարկումը
Աղբահանություն	բնական և արհեստական օբյեկտների, երևույթների և դրանց փոխկապակցվածությունն ապահովող գործոնների համադրությամբ ձևավորվող տարածական միջավայրն է, որը ներազդում է մարդու կյանքի որակի, հոգեբանական ու ֆիզիկական զգացողության վրա
Սանիտարական մաքրում	գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում և տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման նպատակով
Աղբավայր	քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում).***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Համայնքի գլխավոր հատակագիծը	համայնքի տարածական զարգացման հիմնադրույթներն ամրագրող ռազմավարական բնույթի փաստաթուղթ է, որը հիմնական (բազային) գոտիավորմամբ սահմանում է համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը, դրանց օգտագործման ռեժիմներն ու պարտադիր պահանջները, ինչպես նաև տարածքների կառուցապատման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը՝ քաղաքաշինական նպատակներով հողօգտագործումը կանոնակարգելու և արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով
Կենսագործունեության միջավայրը կամ կենսամիջավայրը	բնական և արհեստական օբյեկտների, երևույթների և դրանց փոխկապակցվածությունն ապահովող գործոնների համադրությամբ ձևավորվող տարածական միջավայրն է, որը ներազդում է մարդու կյանքի որակի, հոգեբանական ու ֆիզիկական զգացողության վրա
Քաղաքաշինական կանոնադրությունը	կառավարության սահմանած դեպքերում և կարգով ավագանու կողմից ընդունված փաստաթուղթ է, որը, ելնելով տեղական առանձնահատկություններից, չհակասելով օրենսդրությանը, համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման պահանջներին, ուղղված է տվյալ համայնքում քաղաքաշինական միջավայրի գեղագիտական հատկանիշների պահպանությանն ու կատարելագործմանը՝ ճարտարապետական և լանդշաֆտային ձևավորման, ինչպես նաև սարքավորումների և այլ տարրերի տեղադրման կամ ձևափոխման, հարդարման նյութերի, երանգավորման և արտաքին լուսավորության պայմաններ ու չափորոշիչներ սահմանելու միջոցով

Քաղաքաշինական փաստաթղթերը	քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր
Աղբահանություն	գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում և տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման նպատակով
Սանիտարական մաքրում	համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, զբոսայգիների, պուրակների, հրապարակների, խաղահրապարակների, բակերի, մայթերի, վերգետնյա և ստորգետնյա անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի, շատրվանների, ճամփեզրերի, կողնակների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների և աղբամանների հարթակների սպասարկումը
Աղբավայր	բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան հատուկ ինժեներական կառույցների համակարգ՝ նախատեսված աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման և չեզոքացման համար

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորություններ	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:		
2.	Կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի՝ սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին:		
3.	Սահմանում է աղբի կուտակման համար նախատեսված աղբամանի տարողության ձևն ու չափը:		
4.	Տրամադրում է աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը:		
5.	Իրականացնում է աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումը:		
6.	Հաստատում է աղբի հավաքման և փոխադրման պայմանները և կարգը:		
7.	Կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը:		

8.	Հաստատում է խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և փոխադրման դրույքաչափերիը:		
9.	Հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները:		
10.	Սահմանում է համայնքային աղբավայրերում աղբի տեղադրման համար վճարը:		
11.	Ապահովում է անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը՝ համայնքն սպասարկող անասնաբույժի միջոցով:		
12.	Կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար:		
13.	Կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:		

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորություններ	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:		
2.	Կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի՝ սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին:		
3.	Սահմանում է աղբի կուտակման համար նախատեսված աղբամանի տարողության ձևն ու չափը:		
4.	Տրամադրում է աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը:		
5.	Իրականացնում է աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումը:		
6.	Հաստատում է աղբի հավաքման և փոխադրման պայմանները և կարգը:		
7.	Կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և		

	վերանորոգումը:		
8.	Հաստատում է խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և փոխադրման դրույքաչափերիը:		
9.	Հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները:		
10.	Սահմանում է համայնքային աղբավայրերում աղբի տեղադրման համար վճարը:		
11.	Ապահովում է անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը՝ համայնքն սպասարկող անասնաբույժի միջոցով:		
12.	Կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար:		
13.	Կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:		

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարց 1. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները և նախագծման առաջադրանքը) հաստատում է՝

1) համայնքի ղեկավարը.
2) **համայնքի ավագանին**.
3) լիազոր մարմինը:

Հարց 2. Պետության և համայնքների սեփականության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը) վարձակալությունը չի կարող լինել՝

1) 25 տարուց ավելի ժամկետով.
2) 3 տարուց ավելի ժամկետով.
3) **99 տարուց ավելի ժամկետով:**

Հարց 3. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության համար վարձավճարի նվազագույն չափը սահմանվում է՝

1) տվյալ հողամասի շուկայական արժեքի 10 տոկոսից ոչ պակաս.
2) նվազագույն աշխատավարձի 5 տոկոսից ոչ պակաս.
3) **տվյալ հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս:**

Հարց 4. Կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը՝

1) **համայնքի ղեկավարը.**
2) համայնքի ավագանին.
3) շրջակա միջավայրի նախարարությունը:

Հարց 5. Կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

1) **համայնքի ղեկավարը.**
2) համայնքի ավագանին.
3) մարզպետարանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունը:

Հարց 6. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին) վերապահելու կարգը՝

1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է՝ մարզպետը.
2) **համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է՝ ավագանին.**
3) ավագանու ներկայացմամբ որոշում է՝ լիազոր մարմինը:

Հարց 7. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին՝

1) **համայնքի ավագանին.**
2) համայնքի ղեկավարը.
3) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Հարց 8. օրենքով նախատեսված՝ աղբի հավաքմանը կամ փոխադրմանը ներկայացվող պահանջները մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ խախտելու դեպքում՝

1) **իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կամ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար թույլտվություններ ունեցող անձինք համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են զրկվել աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունից**.
2) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կամ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար թույլտվություններ ունեցող անձինք համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են ստանալ խիստ նկատողություն.
3) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կամ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար թույլտվություններ ունեցող անձինք համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են տրամադրվել լրացուցիչ վճարովի արձակուրդներ:

Հարց 9. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության ժամկետը սահմանվում է՝

1) մինչև 50 տարի.
2) **մինչև 25 տարի.**
3) մինչև 3 տարի**:**

Հարց 10. Աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար կարող է սահմանել՝

1) համայնքի ղեկավարը.
2) մարզպետը.
3) **համայնքի ավագանին:**

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, 2016 թ.

2. «Տեղական ինքնակառավարման հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, «Պետական ծառայություն», Երևան, 2002 թ.

3. Ղազարյան Է., 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին, հեղինակային հրատարակչություն, Երևան, 2003 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
3. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք
4. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք
5. ՀՀ հողային օրենսգիրք
6. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք
7. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք
9. ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշում
10. ՀՀ կառավարության2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին » N 1477-Ն որոշում

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում ավագանու լիազորությունների շրջանակը

Հեղինակ՝ Ժիրայր Ղազարյան

Համակարգչային ձևավորող՝ Հասմիկ Նավասարդյան

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ